ՅՈՒՆԻԲԱՆԿ | ԲԱՆԿ ԵՎ ԱՎԵԼԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025

ՅՈՒՆԻԲԱՆԿ

Բովանդակություն

2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Խորհրդի նախագահի ուղերձ 01
Վարչության նախագահի ուղերձ 02
2025 թվականի բանկի հիմնական իրադարձությունները 03
ՀՀ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները 04
2025 թվականի Յունիբանկի ֆինանսական արդյունքները 05
Յունիբանկի ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը 06
և կարեվորագույն իրադարձությունները
Մանրածախ բիզնես 07
Կորպորատիվ բիզնես 08
Մասնաճյուղային ցանց 09
Բաժնետերեր և ներդրողներ 10
Բանկի անձնակազմ 11
Մեր թիմը 12
Կորպորատիվ կառավարում 13
Ներքին աուդիտ 14
Ռիսկերի կառավարում 15
Իրավական սպասարկում և ժամկետանց պարտավորությունների հետբերում 16
2026 թվականի ռազմավարական առաջնահերթությունները 17
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն 18
Կոնտակտային տեղեկատվություն 19

01

Խորհրդի նախագահի ուղերձ

Հարգելի՛ հաճախորդներ, բաժնետերեր և գործընկերներ,

2025 թվականը Յունիբանկի համար նշանավորվեց կարևոր ձեռքբերումներով և ռազմավարական նախաձեռնությունների իրականացմամբ, որոնք ուղղված էին Բանկի շուկայական դիրքերի ամրապնդմանը և հետագա զարգացմանը: Հաշվետու տարում լրացավ Յունիբանկի IPO-ի իրականացման տասը տարին: Այս ժամանակահատվածում Բանկի բաժնետոմսերի շուկայական արժեքն աճել է շուրջ 70%-ով, ինչը վկայում է հետևողական աճի, ներդրողների վստահության և բաժնետերերի համար երկարաժամկետ արժեքի ստեղծման մասին:
Յունիբանկը Հայաստանում առաջինն էր, որ թողարկեց անժամկետ պարտատոմսեր՝ 6,5 մլրդ դրամ և 9 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, և ավարտեց դրանց տեղաբաշխումը սահմանված ժամկետից զգալիորեն շուտ: Ներդրողների կողմից ցուցաբերված բարձր հետաքրքրությունն արտացոլում է շուկայի վստահությունը Բանկի հետագա զարգացման հեռանկարների նկատմամբ: Յունիբանկը 2025 թվականն ավարտել է 9,8 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթով: Բանկի խորհուրդն առաջարկել է շահութաբաժինների վճարմանն ուղղել 9,3 մլրդ դրամ: Շահութաբերության և ակտիվների որակի բարելավման շնորհիվ Moody’s միջազգային վարկանիշային գործակալությունը հաշվետու տարում Յունիբանկին շնորհեց B1 մակարդակի վարկանիշ՝ «Կայուն» կանխատեսմամբ: Հաճախորդների համար առաջին ընտրության բանկ դառնալու ձգտումը շարունակում է մնալ Յունիբանկի հիմնական առաջնահերթություններից մեկը: Այդ նպատակով մենք հետևողականորեն զարգացնում ենք ինչպես մասնաճյուղային ցանցը, այնպես էլ սպասարկման թվային ուղիները՝ ապահովելով ֆինանսական ծառայությունների հասանելիությունը՝ անկախ հաճախորդի և Բանկի փոխգործակցության ձևաչափից:

Այսօր Յունիբանկի հաճախորդ կարելի է դառնալ ամբողջությամբ առցանց՝ մոբայլ հավելվածում անցնելով կենսաչափական նույնականացում: Փոքր և միջին բիզնեսի աջակցությունը շարունակում է մնալ Բանկի գործունեության ռազմավարական ուղղություններից մեկը: Յունիբանկը ձեռնարկատերերին առաջարկում է համապարփակ աջակցություն բիզնեսի զարգացման բոլոր փուլերում՝ ընկերության գրանցումից և հաշիվների բացումից մինչև վարկավորում, լիզինգ, էքվայրինգ և ժամանակակից թվային ծառայություններ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ՓՄՁ ներկայացուցիչներին ստանալ ֆինանսական ծառայությունների ամբողջական փաթեթը մեկ գործընկերոջից և կենտրոնանալ իրենց բիզնես նպատակների
իրականացման վրա:

2025 թվականի արդյունքներով Յունիբանկն արժանացել է Visa-ի «Strategic Partnership Award 2025» և Mastercard-ի «Excellence in Partnership Development» մրցանակներին:

Միջազգային համագործակցության ընդլայնման նպատակով Յունիբանկը հանդես է եկել որպես մի շարք նշանակալի միջազգային միջոցառումների գործընկեր, այդ թվում՝ Սինգապուրում անցկացված BAFT Asia Bank to Bank համաժողովի, Yerevan Dialogue ֆորումի, որն համախմբել էր պետությունների ղեկավարներին և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին, ինչպես նաև FINTECH360 համաժողովի, որը նվիրված էր ֆինանսական ոլորտի թվային վերափոխման արդիական միտումների քննարկմանը:

Բիզնեսի զարգացման հետ մեկտեղ Յունիբանկը շարունակում է իրականացնել նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրեր: Բանկի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ սպորտի, կրթության և հասարակական նշանակության նախաձեռնությունների աջակցման ծրագրերը:

2026 թվականը Յունիբանկի համար հոբելյանական տարի է լինելու: Բանկը կնշի իր հիմնադրման 25-ամյակը: Քառորդ դարի ընթացքում Յունիբանկն անցել է շուկայի նորաստեղծ մասնակցից մինչև Հայաստանի առաջատար ֆինանսական հաստատություններից մեկի ճանապարհը՝ ապահովելով գրեթե 400 միլիարդ դրամի ակտիվներ:

Հետևելով «Բանկ և ավելին» կարգախոսին՝ մենք մեր առաքելությունն ավելի լայն ենք դիտարկում, քան ավանդական բանկային սպասարկումը: Մեզ համար կարևոր է ոչ միայն ֆինանսական ծառայությունների մատուցումը, այլև մեր հաճախորդների զարգացման համար լրացուցիչ հնարավորությունների ստեղծումը և կյանքի յուրաքանչյուր փուլում նրանց ուղեկցումը:

Վստահ եմ, որ ձեռք բերված փորձը, ուժեղ թիմը և ամուր գործարար հեղինակությունը Յունիբանկին հնարավորություն կտան շարունակել կայուն զարգացումը՝ ի շահ հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների:

Գագիկ Զաքարյան
Բանկի Խորհրդի նախագահ

02

Վարչության նախագահի ուղերձ

Հարգելի բաժնետերեր, Խորհրդի անդամներ, տիկնայք և պարոնայք,
2025թվականի մակրոտնտեսական մարտահրավերների պայմաններում Յունիբանկը ժամանակին ադապտացվեց շուկայական միջավայրի փոփոխություններին և շարունակեց ամրապնդել իր դիրքերը Հայաստանի բանկային շուկայում: Բանկի գործունեության դրական դինամիկան ձևավորվել է երկրում պահպանվող տնտեսական ակտիվության համատեքստում, որը գերազանցել է սպասելիքները և նպաստել բանկային պրոդուկտների ու ֆինանսական ծառայությունների նկատմամբ պահանջարկի պահպանմանը:
Բանկը ցուցաբերել է կայուն ֆինանսական դինամիկա՝ ներառյալ կապիտալի աճը և գործառնական ցուցանիշների բարելավումը: 2025 թվականի ընթացքում Բանկի ակտիվները ավելացել են 16.7%՝ կազմելով 393.8 մլրդ դրամ: Վարկային ներդրումները ավելացել են գրեթե 30%-ով՝ հասնելով 264.6 մլրդ դրամի: Պարտավորությունները կազմել են 343.6 մլրդ դրամ՝ ավելանալով 51.1 մլրդ դրամով: Թողարկված պարտատոմսերի պորտֆելը կազմել է 25.7 մլրդ դրամ՝ տարվա ընթացքում աճելով 70%-ով: Ընդհանուր կապիտալը կազմել է 50.2 մլրդ դրամ: Տարեվերջին կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 17.9%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (11%): Բանկը հաշվետու տարին ավարտել է զուտ շահույթի 9.8 մլրդ դրամ ցուցանիշով, կապիտալի եկամտաբերության (ROE) 20.1% մակարդակով, որը գերազանցում է բանկային հատվածի միջին ցուցանիշը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել վարկային պորտֆելի որակի պահպանմանը և հիմնական ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովմանը: Ժամկետանց վարկերի կառավարման համալիր մոտեցումը, վարկառուների հետ ակտիվ համագործակցությունը և երկուստեք ընդունելի լուծումների որոնումը ապահովել են շուրջ 12.3 մլրդ դրամի փաստացի հետբերում, ներառյալ ընդհանուր 3.5 մլրդ դրամի չափով գույքի իրացումը:
Մանրածախ ուղղությունը պահպանել է Բանկի բիզնես կառուցվածքում իր գերիշխող դիրքը՝ կազմելով ընդհանուր պորտֆելի 71%-ը: 2025 թվականի արդյունքներով մանրածախ վարկային պորտֆելը աճել է 24%-ով՝ գերազանցելով 183 մլրդ դրամը: Աճի հիմնական շարժիչ ուժը շարունակել է մնալ հիփոթեքային վարկավորումը, որի զարգացմանը նպաստել են հիփոթեքային ծրագրերի լայն շրջանակը և համագործակցությունը Հայաստանի առաջատար կառուցապատող ընկերությունների հետ:
Մանրածախ բիզնեսի զարգացման շրջանակում Բանկը շարունակել է գործիքակազմի կատարելագործումը՝ քարտային ուղղությունը սահմանելով որպես առաջնահերթություն: Տարվա ընթացքում թարմացվել են գործող գործիքներն ու ծառայությունները, իրականացվել են նոր լուծումների գործարկմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝ կոբրենդային և տուրիստական քարտերի, ինչպես նաև Mastercard-ի հետ համատեղ նոր նախագծերի իրականացման աշխատանքների մասով: Արդյունքում գործող քարտերի քանակը գերազանցել է 240,000՝ ապահովելով 21% աճ:
Հայկական առաջին վճարահաշվարկային համակարգը՝ UBPay-ը, հաջողությամբ ինտեգրվել է դրամական փոխանցումների շուկայում՝ ընդգրկելով երկրի գրեթե բոլոր համակարգաստեղծ առևտրային բանկերը: Առաջատար միջազգային մատակարարների՝ «URemit»-ի, «iSend»-ի և «MoneyTo»-ի հետ համագործակցությունը ընդլայնել է փոխանցումների աշխարհագրությունը՝ հնարավորություն ընձեռելով հաճախորդներին առաջարկել ծառայությունների ավելի լայն շրջանակ, շահավետ փոխարժեքներ և ժամանակակից ֆինտեխ լուծումներ:
Միկրո, փոքր և միջին բիզնեսի սուբյեկտների աջակցության ռազմավարության հետևողական իրականացման և հաճախորդների բազայի ընդլայնման արդյունքում 2025 թվականի վերջի դրությամբ կորպորատիվ վարկային պորտֆելը աճել է 37%-ով և կազմել 77 մլրդ դրամ: Կորպորատիվ հաճախորդների թիվը գերազանցել է 12,600-ը, հաշվետու տարվա ընթացքում ներգրավվել է ավելի քան 1,500 նոր հաճախորդ:
POS-տերմինալների վաճառքների ակտիվացման արդյունքում 2025 թվականին էքվայրինգ գործառնությունների միջին ամսական շրջանառությունը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատ աճել է 31%-ով, իսկ իրականացված գործարքների քանակը՝ 61%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում լիզինգային պորտֆելը աճել է 55%-ով՝ պահպանելով ժամկետանց պարտավորությունների զրոյական մակարդակ, ինչը վկայում է պորտֆելի բարձր որակի և ռիսկերի գնահատման ու կառավարման արդյունավետ ընթացակարգերի մասին: Սովորական (հասարակ) բաժնետոմսերի և Գ դասի արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկին միացել են ավելի քան 160 նոր բաժնետերեր, իսկ կանոնադրական կապիտալը համալրվել է ավելի քան 2.5 մլրդ ՀՀ դրամով, մնացած 2.9 մլրդը ձևավորվել է որպես էմիսիոն եկամուտ: Բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում Բանկի սովորական բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը կազմել է գրեթե 11%, իսկ Գ դասի արտոնյալ բաժնետոմսերինը՝ 85%: Միևնույն ժամանակ, նշված բաժնետոմսերի ավելի քան 90%-ը ձեռք են բերել մանր ներդրողները, ինչը ևս մեկ անգամ վկայում է Բանկի նկատմամբ ներդրողների բարձր վստահության, ներդրումային գրավչության և մանր ներդրողների լայն հետաքրքրվածության մասին: Շարունակելով կապիտալի շուկայում ակտիվ զարգացումը և հետևողականորեն իրականացնելով ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման ռազմավարությունը՝ Յունիբանկը հանդես եկավ որպես անժամկետ և ստորադաս պարտատոմսերի առաջին թողարկող:
2025 թվականին Բանկը նշանակալի քայլ կատարեց կորպորատիվ կառավարման համակարգի զարգացման ուղղությամբ՝ միանալով Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին: Տեխնոլոգիական ենթակառուցվածքի կատարելագործման ռազմավարության շրջանակներում նախաձեռնվեցին տվյալների բազայի վերլուծական գործիքակազմի ներդրման լայնածավալ աշխատանքներ, բարձր տեխնոլոգիական լուծումների մշակում փոքր և միջին բիզնեսի վարկավորման գործ ընթացը պարզեցնելու նպատակով, ինչպես նաև ներդրվեցին գործառնական լուծումներ՝ ուղղված իրավական սպասարկման գործընթացների օպտիմալացմանը: Աջակցելով Հայաստանում ֆինտեխ ոլորտի զարգացմանը՝ Յունիբանկը դարձավ FinTech Armenia ասոցիացիայի հիմնադիր անդամ՝ իր ներդրումն ունենալով ֆինտեխ էկոհամակարգի դինամիկ զարգացման գործում ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ միջազգային մակարդակում: Ավանդաբար, Բանկն աջակցել է Երևանում միջազգային ֆինտեխ համաժողովի անցկացմանը:
Յունիբանկի գործունեության անփոփոխ առաջնահերթությունը շարունակել է մնալ հաճախորդների նկատմամբ հոգատարությունը և բարձրորակ սպասարկման ապահովումը: Գործարկվել է հերթի առցանց ամրագրման համակարգը, իսկ Բանկի Թեժ հեռախոսակապի կենտրոնի գործառույթների ընդլայնման շնորհիվ զգալիորեն բարձրացել է հաճախորդների հետ փոխգործակցության արդյունավետությունը:

Moody’s միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրել է Բանկի, այդ թվում՝ երկարաժամկետ ավանդների վարկանիշները B2 մակարդակից մինչև B1, ինչպես նաև բարելավել է վարկունակության գնահատականը, ինչն արտացոլում է վարկային պորտֆելի որակի և շահութաբերության աճը: Բանկի կադրային քաղաքականությունը շարունակում է միտված լինել մասնագիտական և մոտիվացված թիմի զարգացմանը և ամրապնդմանը:
Բանկն իր բիզնես նպատակներին հասնելու համար սահմանել է հետևյալ ռազմավարական ուղենիշները.

- Բանկի ներդրումային գրավչության բարձրացում՝ շահութաբերության աճի, ռեսուրսային բազայի մատչելիության վրա կենտրոնացման, ինստիտուցիոնալ ներդրողների շրջանակի ընդլայնման, ինչպես նաև եկամուտների աղբյուրների դիվերսիֆիկացման, այդ թվում՝ կոմիսիոն մարժայի աճի միջոցով:
- Բանկի տեխնոլոգիական հարթակի զարգացում՝ գործառնական գործընթացներում արհեստական բանականության գործիքների ակտիվ ինտեգրման, հաճախորդների բազայի խորքային վերլուծության համար ժամանակակից վերլուծական գործիքների ներդրման, ինչպես նաև թվային ծառայությունների և հաճախորդների հետ փոխգործակցության եղանակների ընդլայնման ու կատարելագործման միջոցով:
- Հաճախորդակենտրոն բիզնես մոդելի ամրապնդում՝ պոտենցիալ լսարանի և հաճախորդների հեռանկարային սեգմենտների բացահայտման, բանկային պրոդուկտներն ու լրացուցիչ ծառայությունները համատեղող համալիր փաթեթային առաջարկների մշակման միջոցով, որոնք կնպաստեն հաճախորդների ֆինանսական կարիքների առավել լայն շրջանակի ընդգրկմանը և Բանկի էկոհամակարգում նրանց ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:
- Կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրում՝ ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի կատարելագործման, կառավարման և հսկողական մարմինների միջև լիազորությունների ու պատասխանատվության բաշխման արդիականացման, կառավարման մարմինների արդյունավետության գնահատման միջոցով:

Որդեգրված ռազմավարության շրջանակներում Բանկն իր առջև նպատակ է դրել 2026 թվականին հասնել 13.1 մլրդ դրամ զուտ շահույթի:Անկեղծորեն շնորհակալ եմ մեր բաժնետերերին և ներդրողներին՝ մեր թիմի նկատմամբ ցուցաբերած աջակցության և վստահության համար, ինչպես նաև մեր հաճախորդներին և գործընկերներին՝ Յունիբանկն ընտրելու համար: Շնորհակալություն եմ հայտնում նաև Յունիբանկի ողջ թիմին՝ եռանդուն և պրոֆեսիոնալ աշխատանքի համար: Համոզված եմ, որ համատեղ ջանքերի շնորհիվ Յունիբանկը կշարունակի իր վստահ ճանապարհը դեպի նոր բարձունքներ և հաջողություններ:

Մեսրոպ Հակոբյան
Վարչության նախագահ

03

ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճշգրտություն

Հստակություն և հավաստիություն

- Շարունակելով կապիտալի շուկայում ակտիվ զարգացումը և հետևողականորեն իրականացնելով ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման ռազմավարություն՝ Յունիբանկը հանդես եկավ որպես անժամկետ և ստորադաս պարտատոմսերի առաջին թողարկող այս տարածաշրջանում, ինչպես նաև իրականացրեց սովորական և արտոնյալ բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում, որոնց հաջող տեղաբաշխումը վկայում է ներդրողների վստահության բարձր մակարդակի մասին:
- Visa-ն Յունիբանկին շնորհեց Strategic Partnership Award 2025 մրցանակը Հայաստանում անկանխիկ ու թվային վճարումներն ավելի հարմար, ապահով ու հասանելի դարձնելու համար:
- Moody’s միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրեց Բանկի, այդ թվում՝ երկարաժամկետ ավանդների վարկանիշները B2 մակարդակից մինչև B1, ինչպես նաև բարելավեց վարկունակության գնահատականը, ինչն արտացոլում է վերջին տարիների ընթացքում բանկի վարկային պորտֆելի որակի և շահութաբերության զգալի բարելավումը:
- Բանկը հետևողականորեն իրականացրեց մասնաճյուղային ցանցի ընդլայնման և թղթակցային ցանցերի աշխարհագրական դիվերսիֆիկացման ռազմավարություն՝ գործարար հարաբերություններ հաստատելով Մերձավոր Արևելքի և Կենտրոնական Ասիայի մի շարք առաջատար բանկերի հետ: Յունիբանկը դարձել է Առևտրի և ֆինանսավորման բանկային ասոցիացիայի (BAFT) անդամ: Բրիտանական բիզնես համայնքի հետ փոխգործակցության ընդլայնման նպատակով Յունիբանկը դարձել է նաև Հայ-բրիտանական Առևտրի պալատի անդամ:
- 2025 թվականին Բանկը նշանակալի քայլ կատարեց կորպորատիվ կառավարման համակարգի զարգացման ուղղությամբ՝ միանալով Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին:
- Յունիբանկը ստացավ Հաճախորդների պաշտպանության հավաստագիր, որը շնորհվում է MFR միջազգային վարկանիշային գործակալության կողմից: Հավաստագրումը հաստատում է, որ բանկի հաճախորդների սպասարկումը համապատասխանում է միջազգային չափանիշներին և արտացոլում է առաջընթացը լավագույն փորձի ներդրման ուղղությամբ:
- Agents For Impact միջազգային ընկերության աջակցությամբ նախաձեռնվել և իրականացվում է նախագիծ՝ ուղղված Բանկում ESG գործընթացների փուլային ներդրմանը և համապատասխան վարկանիշի ստացմանը:
- Աջակցելով Հայաստանում ֆինտեխ ոլորտի զարգացմանը՝ Յունիբանկը դարձել է FinTech Armenia ասոցիացիայի հիմնադիր անդամ՝ իր ներդրումն ունենալով ֆինտեխ էկոհամակարգի դինամիկ զարգացման գործում: Բանկը միաժամանակ աջակցել է Երևանում միջազգային ֆինտեխ360 համաժողովի և DigiTec 2025-ին անցկացմանը:

04

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկային համակարգը ներառում է 17 առևտրային բանկ: Հայաստանի բանկային համակարգի ակտիվները 2024 թվականի համեմատ աճել են 1,792.4 մլրդ դրամով կամ 16.29%-ով և 31.12.2025թ. դրությամբ կազմել 12,795.7 մլրդ դրամ, վարկային պորտֆելն աճել է 1,402.9 մլրդ դրամով կամ 22.36%-ով և կազմել 7,676.8 մլրդ դրամ, պարտավորությունները աճել են է 15.4%-ով կամ 1,419.3 մլրդ դրամով և 31.12.2025թ. դրությամբ կազմել են 10,649.2 մլրդ դրամ կազմել: 2025 թվականին պարտավորությունների ցուցանիշներում մեծ տեսակարար կշիռ ունեն հաճախորդներից ներգրավված միջոցները, որոնք աճել են 883.1 մլրդ դրամով և կազմել 7,328.7 մլրդ դրամ:

2025թ. գործունեության արդյունքներով ՀՀ բանկային համակարգում ձևավորվել է 417.9 մլրդ դրամ զուտ շահույթ: ՀՀ բանկային համակարգի շահույթի ցուցանիշը 2024թ.-ի համեմատ աճել է 57.1 մլրդ դրամով կամ 15.82% -ով:

Բանկային համակարգի ցուցանիշների դինամիկան և դրանց հարաբերակցությունը ՀՆԱ - ին

Բանկային համակարգի Կապիտալի և զուտ շահույթի փոփոխություն



05

2025 ԹՎԱԿԱՆԻ ՅՈՒՆԻԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Անվանում	31.12.25 (մլրդ. ՀՀդրամ)
Ակտիվներ	394
Վարկեր	265
Ներդրումներ արժեթղթերում	23
Պարտավորություններ	344
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	271
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	26
Զուտ տոկոսային եկամուտ	20
Ընդհանուր կապիտալ	50
2025թ. Շահույթը	9.8

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ. Յունիբանկ և բանկային համակարգ





06

ՅՈՒՆԻԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Յունիբանկ ԲԲԸ ակտիվները (մլրդ ՀՀ դրամ)



Բանկի ընդհանուր ակտիվները 2025թ. ընթացքում ավելացել են 57.2 մլրդ ՀՀ դրամով և 31.12.2025թ. դրությամբ կազմել 393.78 մլրդ ՀՀ դրամ, որից վարկային պորտֆելը կազմել է 264.56 մլրդ ՀՀ դրամ, իսկ արժեթղթերի պորտֆելը՝ 25 մլրդ ՀՀ դրամ:

Ակտիվների կառուցվածքը

Պարտավորություններ և կապիտալ, մլրդ ՀՀ դրամ



2025թ. ընթացքում պարտավորությունները ավելացել են 51.2 մլրդ ՀՀ դրամով: Հաճախորդների նկատմամբ պարտավորությունները 2025թ ընթացքում ավելացել են 23.57 մլրդ ՀՀ դրամով՝ կազմելով 271.11 մլրդ ՀՀ դրամ:
Սեփական կապիտալի կառուցվածքում կանոնադրական կապիտալը կազմում է 23.4 մլրդ ՀՀ դրամ, էմիսիոն եկամուտը՝ 14.18 մլրդ ՀՀ դրամ, գլխավոր պահուստը՝ 1.32 մլրդ ՀՀ դրամ, վերագնահատման պահուստները՝ 1.43 մլրդ ՀՀ դրամ և չբաշխված շահույթը՝ 9.82 մլրդ ՀՀ դրամ: Պարտավորությունների կառուցվածքում խոշորագույն հոդված են հանդիսանում հաճախորդների նկատմամբ պարտավորությունները, որոնք կազմել են ընդամենը պարտավորությունների 79%-ը կամ 271.11 մլրդ դրամ:

Ավանդային պորտֆել

Ժամկետային ավանդները 2025թ. տարեվերջի համեմատ ավելացել են 14.71 մլրդ ՀՀ դրամով և կազմել 141.13 մլրդ ՀՀ դրամ: Ցպահանջ ավանդները 2025թ. ընթացքում ավելացել են մոտ 9.4 մլրդ ՀՀ դրամով և կազմել 130.39 մլրդ ՀՀ դրամ:

Ավանդային պորտֆելի կառուցվածքը, մլրդ ՀՀ դրամ



Բանկի հաճախորդներից ներգրավված միջոցների ծավալը 2025 թվականին կազմել է 247.5 մլրդ ՀՀ դրամ: Բանկի ընդհանուր պարտավորությունների մեջ ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդները կազմել են 57% կամ 166.4 մլրդ ՀՀ դրամ, ընդ որում ցպահանջ միջոցները կազմել են 68.1 մլրդ դրամ, իսկ ժամկետային ավանդների մնացորդը՝ 98.2 մլրդ դրամ:

Պարտավորությունների կառուցվածքը



Ժամկետային ավանդների կառուցվածքը



Վարկային պորտֆել

Բանկի ընդհանուր վարկային ներդրումներն առ 31.12.2025թ. կազմել են 264.56 մլրդ ՀՀ դրամ, նախորդ տարվա համեմատ աճելով 32.4%-ով կամ 64.7 մլրդ ՀՀ դրամով:

Վարկային պորտֆելի կառուցվածքը



Վարկային պորտֆել



Վարկային արժույթի կառուցվածք



Արժեթղթեր

2025 թվականին Բանկի արժեթղթերի պորտֆելը կազմել է 25 մլրդ ՀՀ դրամ: Արժեթղթերի պորտֆելը մեծամասամբ կազմված են պարտքային և ֆիքսված եկամտով այլ գործիքներից, որոնք հիմնականում կիրառվում են իրացվելիության կառավարման նպատակով: 2025 թվականի տարեվերջի դրությամբ ընդհանուր արժեթղթերի պորտֆելում էական մասնաբաժին են կազմել ՀՀ կառավարության արժեթղթերը՝ 87%, կորպորատիվ պարտատոմսերի մասնաբաժինը կազմել է 13%:

Արժեթղթերի պորտֆել



07

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

Մանրածախ բիզնեսը Բանկի բիզնեսի կառուցվածքում մնացել է գերակշռող ուղղություն՝ 70% մասնաբաժնով: 2025թ. Բանկի մանրածախ վարկային պորտֆելը աճել է մոտ 36 մլրդ դրամով կամ 24% ով և կազմել է 183,6 մլրդ դրամ: Հիփոթեքը շարունակել է առաջատար դեր ունենալ վարկային պորտֆելի դինամիկայի մեջ, հիփոթեքային ծրագրերի լայն շրջանակի և Հայաստանի առաջատար շինարարական ընկերությունների հետ համագործակցության շնորհիվ տարեվերջի արդյունքներով Բանկում հիփոթեքային վարկավորման ծավալն աճել է 38%-ով կամ 23.7 մլրդ դրամով, պորտֆելը կազմել է 85.8 մլրդ՝ միաժամանակ ունենալով ժամկետանց պարտավորությունների ամենացածր մասնաբաժինը՝ 0.1%:

ՅՈՒՆԻԲԱՆԿ-ը շարունակել է իր ակտիվ մասնակցությունը Արցախից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրին՝ 1000-ից ավելի ընտանիքներին տրամադրելով ավելի քան 13.2 մլրդ դրամ գումարի չափով հիփոթեքային վարկեր, ինչպես նաև Բանկը 2025թ-ին միացել է ՊՆ զինծառայողներին պետական աջակցությամբ բնակարանային ձեռքբերման ծրագրին, որի շրջանակներում տրամադրել է թվով 40 հիփոթեքային վարկ՝ ընդհանուր 758 մլն ՀՀ դրամ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել քարտային բիզնեսի զարգացմանը, արդյունքում գործող քարտերի թիվը կազմել է 241,000՝ 21% աճի ապահովմամբ: 2025թ. արդյունքներով ճկուն պայմանների և գործընկերային լայն ցանցի շնորհիվ «ՅՈՒՆԻԲԱՆԿ»-ը դարձավ առաջատարը հայկական շուկայում POS-վարկերի քանակով:

Վստահություն

Երկարաժամկետ հարաբերություններ

Մանրածախ բանկերը վարկային պորտֆելի կառուցվածքում. Յունիբանկ և բանկային համակարգ



08

Կայունություն

Վստահելի և ամուր հիմքեր

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

Հաշվետու ժամանակահատվածում կորպորատիվ ուղղությունը ակտիվորեն հետևել է տնտեսության առանցքային ոլորտների զարգացմանը և դինամիկային՝ ցուցաբերելով կայուն աճ և դրական արդյունքներ: Բանկն ընդլայնել է հաճախորդների բազան, և 2025թ. վերջին կորպորատիվ վարկային պորտֆելի ծավալն աճել է 37%-ով: Բացի վարկային գործիքների թարմացումից, Բանկը զբաղվում է տեխնիկական աջակցության կատարելագործմամբ և ոչ վարկային գործիքների զարգացմամբ:

Բանկը ապահովել է ոչ տոկոսային եկամուտների զգալի աճ: Կատարվել է POS-տերմինալների վաճառքի ակտիվացում և 2025 թվականի դրությամբ POS-տերմինալների միջին ամսական շրջանառությունը աճել է մոտ 31%-ով, իսկ գործարքների քանակը՝ 61%-ով: Վաճառքների բարելավման ուղղությամբ իրականացվել է ակտիվ մարքեթինգային դեմպինգային արշավներ: Բանկը դիտարկում է նաև Լիզինգային գործիքների զարգացումը որպես կորպորատիվ ֆինանսավորման առաջնահերթ ուղղություններից մեկը, որը ուղղված է պորտֆելի ավելացման և հաճախորդների բազայի ընդլայնման:

Հաշվետու ժամանակահատվածում Լիզինգային պորտֆելի ծավալն աճել է 55%-ով, որում բացակայում են ժամկետանց հայտերը: Բանկը ամրապնդում է համագործակցությունը սարքավորումների տեղական և միջազգային մատակարարների հետ, ինչը ապահովում է գործարքների դիվերսիֆիկացում, մեծացնում է պոտենցիալ հաճախորդների շրջանակը և թույլ է տալիս ձևավորել մրցակցային համալիր առաջարկներ «սարքավորում + ֆինանսավորում»:

Բանկը կիրառում է ագրեսիվ մարքեթինգային մոդել, որի նպատակն է ներգրավել սարքավորումներ արտադրողներին և դիստրիբյուտորներին որպես լիզինգային ծրագրերի գործընկերներ: Այս մոդելի շրջանակներում իրականացվում են անմիջական այցելություններ մատակարարներին և բանակցություններ համատեղ փաթեթային առաջարկների շուրջ: Բանկը շարունակում է ակտիվ համագործակցությունը Գերմանա-հայկական հիմնադրամի հետ՝ փոքր և միջին ձեռնարկություններին ծրագրային վարկեր տրամադրելու նպատակով:

09

Արագություն

Արագ որոշումներ և սպասարկում

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԱՅԻՆ ՑԱՆՑ

2025 թվականի դրությամբ Բանկը, իր 49 մասնաճյուղային ցանցով (որից 30-ը՝ Երևան քաղաքում, 19-ը՝ մարզերում), 76 պրոմո կետերով, 93 բանկոմատներով, 104 վճարային տերմինալներով և 502 POS տերմինալներով, շարունակել է ապահովել որակյալ և հասանելի սպասարկում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: 2025 թվականի ընթացքում իրականացվել են թվով 4 մասնաճյուղերի (Մալաթիա, Թիվ 47, Արտաշատ և Սիսիան) վերափոխման և ընդլայնման աշխատանքներ՝ ձևավորելով առավել ժամանակակից, հարմարավետ և արդիական միջավայր՝ հաճախորդների սպասարկման փորձառության հետագա բարելավման նպատակով:
Մասնաճյուղային ենթակառուցվածքների զարգացման գործընթացը կրում է շարունակական բնույթ, հետևողականորեն ընդլայնվում են պրոմո կետերի և վճարային տերմինալների ցանցերը՝ նպաստելով Բանկի ծառայությունների հասանելիության բարձրացմանը:
2025 թվականին ընդլայնվել են բանկային խորհրդատուների ծառայությունը, դրա գործառնական հնարավորությունները՝ ապահովելով հաճախորդների առավել արդյունավետ իրազեկում Բանկի կողմից մատուցվող ծառայությունների և առաջարկվող լուծումների վերաբերյալ: Բանկն առաջարկում է մի շարք առցանց բանկային ծառայություններ և շարունակաբար քայլեր է ձեռնարկում դրանց ընդլայնման ուղղությամբ: Բարելավվել է մանրածախ հաճախորդների համար նախատեսված բջջային հավելվածի գործիքակազմը, ինչպես նաև գործարկվել է հավելվածի՝ կորպորատիվ հատվածի կարիքներին համապատասխանեցված տարբերակը, որի գործիքակազմը գտնվում է աստիճանական ընդլայնման փուլում: Իրականացվել է «Թեժ գիծ» կենտրոնի տեխնոլոգիական արդիականացում, ինչպես նաև վերանայվել և ընդլայնվել է աշխատանքային գրաֆիկը՝ ներկայումս ապահովելով սպասարկում մինչև ժամը 22:00: Միաժամանակ, նախատեսվում է 2026 թվականի երկրորդ կիսամյակից անցում կատարել 24/7 սպասարկման ռեժիմի: Զանգերի կենտրոնի միջոցով իրականացվում է նաև ռեզիդենտ հաճախորդների քարտերի վերաթողարկման և հաճախորդների կողմից նշված հասցեներով անվճար առաքման գործընթացը:
Private Banking. Բանկը ձգտում է դառնալ գործընկեր իր հաճախորդների համար, և ոչ թե լինել պարզապես ֆինանսական հաստատություն: Իր VIP հաճախորդներին Յունիբանկը երաշխավորում է անհատական և ճկուն մոտեցում, ժամանակի խնայողություն, ցանկացած իրավիճակում աջակցություն ցուցաբերելու պատրաստակամություն, մասնավոր կապիտալի կառավարման համաշխարհային փորձի կիրառում: Այսպիսով Բանկը նպատակ ունի հաճախորդների համար ստեղծել հարմարավետ պայմաններ և դրանով իսկ անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրին:

ԱՌՑԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճկունություն

Փոփոխություններին հարմարվելու կարողություն

2025 թվականի ընթացքում շարունակվել են Բանկի մոբայլ հավելվածի զարգացման և կատարելագործման աշխատանքները՝ նպատակ ունենալով հաճախորդներին տրամադրել առավել հարմարավետ, արագ և անվտանգ թվային բանկային ծառայություններ:

Ներդրվել և զարգացվել են մի շարք կարևոր գործառույթներ, որոնց թվում են՝

- հաշիվների բացում մոբայլ հավելվածի միջոցով
- քարտից քարտ փոխանցումներ արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերին
- վարկերի ձևակերպում և տրամադրում հավելվածի միջոցով
- վիրտուալ քարտերի PIN կոդի փոփոխման հնարավորություն
- այլ բանկերի քարտերի կցման հնարավորություն
- ֆիզիկական քարտերի CVV կոդի դիտման հնարավորություն
- օնլայն քաղվածքների և տեղեկանքների ստացում
- քարտերի ակտիվացման, բլոկավորման և ապաբլոկավորման գործառույթների ներդրում
- քարտային չմշակված և չհաստատված գործարքների արտացոլում
- Push ծանուցումների ուղարկման համակարգի ներդրում
- ինչպես նաև մի շարք այլ տեխնիկական և ֆունկցիոնալ բարելավումներ,

որոնք ուղղված են հաճախորդների սպասարկման գործընթացների պարզեցմանը, ժամանակի խնայողությանը և թվային ծառայություններից օգտվելու հարմարավետության բարձրացմանը:

Բանկի կողմից ներդրվել է նաև բիզնես հաճախորդների համար նախատեսված մոբայլ հավելվածը, որը հնարավորություն է տվել առավել հարմարավետ և օպերատիվ կերպով օգտվել բանկային ծառայություններից: Հավելվածի միջոցով բիզնես հաճախորդները ստացել են հաշիվների կառավարման, ակնթարթային փոխանցումների և վճարումների իրականացման, գործարքների վերահսկման և այլ բանկային ծառայություններից հեռավար օգտվելու հնարավորություն, ինչը զգալիորեն բարձրացրել է սպասարկման արդյունավետությունն ու հասանելիությունը: Միաժամանակ իրականացվել են մոբայլ հավելվածի տեխնիկական ենթակառուցվածքների, անվտանգության համակարգերի և գործառնական կայունության բարելավման աշխատանքներ, որոնց արդյունքում ապահովվել է Android և iOS հարթակներում ծառայությունների առավել կայուն, անխափան և հուսալի աշխատանքը: Իրականացված աշխատանքները նպաստել են մոբայլ հավելվածի ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնմանը, հաճախորդների թվային սպասարկման որակի բարձրացմանը, ինչպես նաև Բանկի հեռահար ծառայությունների հասանելիության և անվտանգության մակարդակի ամրապնդմանը:

10

Վերելք

Նոր բարձունքների նվաճում

ԲԱԺՆԵՏԵՐԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ

Յունիբանկ ԲԲԸ-ն կարևորում է իր բաժնետերերի, ինչպես նաև ներդրողների շահերն ու իրավունքները՝ նրանց համար ստեղծելով բարենպաստ պայմաններ, ապահովելով տեղեկատվության բարձր մակարդակի թափանցիկություն և ներդրումային գրավչություն:

Բանկը մեծ ուշադրություն է դարձնում ներդրումային ծառայությունների զարգացմանը և նոր պրոդուկտների ներդրմանը՝ նպատակ ունենալով ներգրավել հավատարիմ ներդրողների՝ ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց շրջանակից:

Յունիբանկի բաժնետոմսերի գնի դինամիկան՝ IPO-ից ի վեր



2015–2025 թվականներին Բանկն ապահովել է կապիտալի կայուն աճ՝ իրականացնելով բաժնետոմսերի 9 թողարկում: Բաժնետոմսերի շուկայական արժեքն աճել է գրեթե 70%-ով՝ արտացոլելով Բանկի կայուն զարգացումն ու ներդրումային գրավչությունը: Բանկն ունի շուրջ 400 մինորիտար բաժնետեր, ինչը վկայում է լայն ներդրողական բազայի և հանրային վստահության մասին: Բաժնետոմսերի զգալի մասն ազատ շրջանառության մեջ է (free float), ապահովելով դրանց իրացվելիությունն ու հասանելիությունը
ներդրողների համար:

- Սովորական բաժնետոմսեր՝ ավելի քան 10%
- Բ դասի արտոնյալ բաժնետոմսեր՝ ավելի քան 17%
- Գ դասի արտոնյալ բաժնետոմսեր՝ ավելի քան 85%

2025 թվականին Յունիբանկ ԲԲԸ-ն իրականացրել է սովորական (հասարակ) բաժնետոմսերի և տարեկան հաստատագրված 12% շահութաբաժնով Գ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի թողարկումներ: Արդյունքում տեղաբաշխվել է 10 մլն հատ սովորական բաժնետոմս՝ ընդհանուր գրեթե 4 մլրդ ՀՀ դրամ տեղաբաշխման արժեքով, ինչպես նաև 3.8 մլն հատ Գ դասի արտոնյալ բաժնետոմս՝ շուրջ 1.5 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր տեղաբաշխման արժեքով: Բաժնետոմսերի նոր թողարկումների արդյունքում Բանկին միացել են ավելի քան 160 նոր բաժնետերեր, իսկ կանոնադրական կապիտալը համալրվել է ավելի քան 2.5 մլրդ ՀՀ դրամով, մնացած 2.9 մլրդը ձևավորվել է որպես էմիսիոն եկամուտ: Միևնույն ժամանակ, նշված բաժնետոմսերի ավելի քան 90%-ը ձեռք են բերել մանր ներդրողները, ինչը ևս մեկ անգամ վկայում է Բանկի նկատմամբ ներդրողների բարձր վստահության, ներդրումային գրավչության և մանր ներդրողների լայն հետաքրքրվածության մասին:

Տարեվերջին բաժնետերերի կառուցվածքը նկարագրվում էր հետևյալ ցուցանիշներով՝ Յունիբանկ ԲԲԸ-ի բաժնետոմսերի 75.24%-ին տիրապետում էր Յունիհոլդինգ ՋիՋի Լիմիթեդ ընկերությունը, իսկ մնացած 24.76%-ի սեփականատեր էին հանդիսանում թվով 399 մինորիտար բաժնետերեր:

Բանկի բաժնետոմսերի ներդրումային առանձնահատկությունները

- Գրավիչ եկամտաբերություն. վերջին 3 տարվա ընթացքում միջինում 10–12% տարեկան շահութաբաժնային եկամտաբերություն՝ զգալիորեն ավելի բարձր, քան տեղական ավանդների տոկոսադրույքները:
- Հարկային առավելություն. Գործող օրենսդրության համաձայն վճարվող շահութաբաժինները չեն հարկվում, քանի որ Յունիբանկ ԲԲԸ բաժնետոմսերը շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայում:
- Իրացվելիություն. բաժնետոմսերը հնարավոր է վաճառել ցանկացած պահին՝ բրոքերի միջոցով:
- Շահութաբաժինների վճարման թիրախային մակարդակը կազմում է Բանկի նախորդ տարվա զուտ շահույթի առնվազն 25 տոկոսը:

Յունիբանկ ԲԲԸ-ն շարունակել է ակտիվ գործունեությունը կորպորատիվ պարտատոմսերի շուկայում և կրկին հանդես է եկել որպես պիոներ՝ Հայաստանի կապիտալի շուկայում առաջինը թողարկելով ստորադաս պարտատոմսեր և անժամկետ պարտատոմսեր: Մասնավորապես, 2025 թվականի փետրվարի 1-ին ավարտվել է Բանկի՝ 10 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 7 տարի շրջանառության ժամկետով, 6.25% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով ստորադաս պարտատոմսերի տեղաբաշխումը: Արդեն դեկտեմբերին Բանկը առաջին անգամ Հայաստանում թողարկել և կարճ ժամանակում տեղաբաշխել է անժամկետ պարտատոմսերի 3 սերիա՝ ընդհանուր 6.5 մլրդ ՀՀ դրամ և 9 մլն ԱՄՆ դոլար ծավալով: 2025 թվականի ավարտին Բանկի կողմից թողարկված կորպորատիվ պարտատոմսերից 11 դաս ցուցակված են եղել Հայաստանի ֆոնդային բորսայի կորպորատիվ պարտատոմսերի շուկայում՝ ընդհանուր շուրջ 25 մլրդ ՀՀ դրամ ծավալով:

11

ԲԱՆԿԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Միասնություն

Թիմային աշխատանք

Բանկի աշխատակիցների փաստացի թվաքանակը 2025-ի վերջի դրությամբ կազմել է 1142: 2025թ-ին աշխատանքի է ընդունվել 184 հոգի, որից 13-ը՝ ղեկավար պաշտոնների: Նոր աշխատակիցների ինտեգրումը ապահովելու համար Բանկի ուսումնական կենտրոնում կազմակերպվում են մի շարք դասընթացներ, որը վարում են փորձառու աշխատակիցները: Ընդհանուր առմամբ իրականացվել են թվով 220 ներքին և արտաքին սեմինարներ, որտեղ ներգրավված են եղել շուրջ 5250 մասնակից: Բանկը շարունակում է ակտիվորեն համագործակցել մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Ուսանողների համար կազմակերպվում է պրակտիկ ուսուցում Բանկում, /2025թ-ին պրակտիկ ուսուցում է անցել 47 ուսանող/ հնարավորություն մասնակցել մրցույթներին, ինչպես նաև համալրել կադրային կազմը: 2025թ-ին Բանկը մասնակցել է ամենամյա լավագույն գործատուների փառատոնին: Իր սեփական տաղավարում հյուրընկալել է ապագա դիմորդներին՝ ներկայացնելով Բանկի արժեքները, թիմը, մշակույթը, ընձեռած հնարավորությունները: Փառատոնին մասնակցությունը խթանեց նաև Բանկում գործող քարտային պրոդուկտների վաճառքների ավելացմանը: Մենք գնահատում ենք մեր ղեկավար կազմի մշտական և հետագա զարգացումը՝ դրանով խթանելով նրանց մասնակցությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս անցկացվող միջազգային դասընթացներին: Բանկի ղեկավար անձնակազմը մասնակցել է 67 միջազգային ֆորումների, կոնֆերանսների և դասընթացների, որտեղ ձեռք են բերել թվով 24 միջազգային սերտիֆիկատներ:

Մասնաճյուղերի ղեկավարների համար կազմակերվել են արտագնա հանդիպում-դասընթացներ, որն ուղղված էր կառավարչական, թիմային առաջնորդության և առաջխաղացման կարողությունների զարգացմանը ինչպես նաև նոր գիտելիքների ձեռքբերմանը և անձնային աճին: Բանկի բոլոր աշխատակիցների համար ներդրված է առողջության ապահովագրության համակարգ, 2025 թ-ին այն վերանայվել է և այժմ աշխատողներն ունեն ավելի բարելավված պայմաններով առողջության ապահովագրության փաթեթ:

Բանկը կարևորում է աշխատողների մոտիվացիան և ունի տարբեր մոտիվացիոն համակարգեր՝ ֆինանսական և ոչ ֆինասական: Մոտիվացիոն համակարգերը պարբերաբար վերանայվում են կախված բանկի բիզնես կարիքներից և ժամանակակից HR-մոտեցումներից: Ինչպես սպասարկող անձնակազմի այնպես էլ Բանկի բոլոր աշխատակիցների համար ներդրվել են նոր KPI-ներ և ավելի բարելավված պայմաններով մոտիվացիոն համակարգեր:

Նոր համակարգերը քննարկվում և ներկայացվում են ինչպես գործող, այնպես էլ նոր ընդունված աշխատակիցների հետ: 2025թ-ին իրականացվել է աշխատակիցների ներգրավվածության վերաբերյալ հարցում և հարցման ամփոփման արդյունքում Գլխամասային գրասենյակի աշխատակիցների 92%-ը իսկ մանսաճյուղերի աշխատակիցների 81%-ը համարվել են ներգրավված:

12

ՄԵՐ ԹԻՄԸ

ԳԱԳԻԿ ՁԱՔԱՐՅԱՆ

Խորհրդի նախագահ
«Յունիբանկ»ԲԲԸ-համահիմնադիր, Խորհրդի նախագահ
Ռեգո Ինշուրանս ԱՓԲԸ Տնօրենների Խորհրդի նախագահ

ԳԵՈՐԳԻ ՊԻՍԿՈՎ

«Յունիբանկ» ԲԲԸ - համահիմնադիր,
Խորհրդի անդամ, «MoneyTO» ՍՊԸ, հիմնադիր

ՖԻԼԻՊ ԴԵԼՄՈՏ

Խորհրդի անդամ

ՎԱՐԴԱՆ ԱԹԱՅԱՆ

Խորհրդի անդամ

ՌՈՒԲԵՆ ԻՆՋԻԿՅԱՆ

Խորհրդի անդամ

ԿԱՐԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

Խորհրդի անդամ

ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ
Վարչության նախագահ

ԱՐԱՐԱՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության նախագահի առաջին տեղակալ

ՕՎՍԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վարչության նախագահի առաջին տեղակալ
Իրավական սպասարկման և ժամկետանց
պարտավորությունների հետբերման գծով տնօրեն

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ֆինանսական տնօրեն - գլխավոր հաշվապահ

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Վարչության նախագահի առաջին տեղակալ
Կորպորատիվ բիզնեսի զարգացման
և վաճառքների տնօրեն

ԳՈՒՐԳԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Վարչության նախագահի առաջին տեղակալ
Մանրածախ բիզնեսի զարգացման
և վաճառքների տնօրեն

ՎԱՂԻՆԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վարչության նա խագահի տեղակալ նախագծերի
և ստանդարտների ներդրման գծով

ԱՐԹՈՒՐ ԱՊԵՐՅԱՆ
Օպերացիոն սպասարկման և
տեղեկատվական համակարգերի տնօրեն

ՍԵՐԳԵՅ ՔՈՉԱՐՅԱՆ
Ռիսկերի կառավարման գծով տնօրեն

ԱՐԹՈՒՐ ՂՈՒԿԱՍՈՎ
Ներքին աուդիտի տնօրեն

Բանկի Վարչությունը

13

Հեղինակություն

Վստահության և ազդեցության ամրապնդում

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2025 թվականին Բանկը միացել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. թիվ 1955-Ն հրամանով հաստատած ՀՀ կորպորատիվ կառա¬վարման կանոնագրքին և հրապարակել իր առաջին Կորպորատիվ կառավարման տարեկան հաշվետվությունը՝ ներառյալ Կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:

Կորպորատիվ կառավարման նպատակն է թափանցիկության, վստահության, բարեվարքության և հաշվետվողականության միջավայրի ձևավորման միջոցով աջակցել դեպի Բանկ երկարաժամկետ ներդրումների ներգրավմանը, ֆինանսական կայունությանը, խթանել եկամուտների ավելի մեծ ծավալով աճը, ինչպես նաև նպաստել որոշումների կայացման գործընթացում հանրության ներգրավվածությանը:

Բանկը ձգտում է պահպանել կորպորատիվ կառավարման ամենաբարձր չափանիշները՝ իր գործունեությունը համապատասխանեցնելով ինչպես ՀՀ կորպորատիվ կառա¬վարման կանոնագրքի պահանջներին, այնպես էլ միջազգային լավագույն փորձին:

ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքին համապատասխան՝ Բանկն իրականացրել է իր համապատասխանության համապարփակ ինքնագնահատում՝ կիրառելով ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված II փուլի ձևաչափը:

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐ	Բաժնետերերի ընդհանուր ժողով (1 տարեկան և 2 արտահերթ ժողով)

ԽՈՐՀՈՒՐԴ (42 նիստ)

ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ	Ներդրումային հանձնաժողով (5 նիստ)	Աուդիտի հանձնաժողով (3 նիստ)	Ռիսկերի կառավարման հանձնաժողով (3 նիստ)	Անձնակազմի և պարգևատրումների հանձնաժողով (12 նիստ)

ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ (92 նիստ)

Վարչության նախագահի առաջին տեղակալ	Մանրածախ բիզնեսի զարգացման վաճառքների տնօրինություն	Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրինություն	Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորութ-յունների հետբերման տնօրինություն	Հաշվապահական հաշվառման տնօրինություն	Նախագծերի և ստանդարտների ներդրման տնօրինություն	Օպերացիոն սպասարկման-տեղեկատվական համակարգերի տնօրինություն	Ռիսկերի կառավար-ման տնօրինություն

ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Ակտիվների և պասիվների կառավարման և սակագնային հանձնաժողով (41 նիստ)	Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողով (4 նիստ)	SS և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով (4 նիստ)	Անձնակազմի գնահատման հանձնաժողով (11 նիստ)	Տենդերային հանձնաժողով (8 նիստ)	Սքորինգի հանձնաժողով (1 նիստ)	Մարքեթինգային հանձնաժողով (2 նիստ)

ԱՅԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ/ԿՈՄԻՏԵՆԵՐ

Վարկային կոմիտե (88 նիստ)	Պահուստների կառավարման հանձնաժողով (45 նիստ)	Որակավորման հանձնաժողով

14

Ազատություն

Ֆինանսական անկախություն

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

2025 թվականից կիրառվում են Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (The IIA) կողմից 2024 թվականին հրապարակված : Ներքին աուդիտի միջազգային նոր ստանդարտները (GIAS 2025), որոնք սահմանում են ներքին աուդիտի գործունեության նոր պահանջներ և որակի չափանիշներ՝ նպաստելով դրա արդյունավետության բարձրացմանն ու կազմակերպության համար ավելացված արժեքի ստեղծմանը:

Տարեսկզբից իրականացվում են աշխատանքներ՝ ուղղված նոր ստանդարտների ներդրմանը, ներառյալ ներքին նորմատիվ-իրավական դաշտի վերանայումը և կատարելագործումը, ինչպես նաև գործընթացների արդյունավետության բարձրացումն ու արդիականացումը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ռիսկերի վրա հիմնված աուդիտի մոտեցման զարգացմանը և խորհրդատվական գործառույթի կատարելագործմանը:

Ներքին աուդիտի գործառույթի որակի և արդյունավետության շարունակական բարելավման նպատակով 2025 թվականի ընթացքում Բանկի Ներքին աուդիտի աշխատակիցները, որոնք հանդիսանում են Ներքին Աուդիտորների Ինստիտուտի (The IIA Armenia) անդամներ, մասնակցել են տարբեր մասնագիտական դասընթացների, սեմինարների և վերապատրաստումների՝ ընդլայնելով իրենց մասնագիտական գիտելիքները և կատարելագործելով աշխատանքային հմտությունները:

Այս գործընթացը նպաստել է շարունակական մասնագիտական կրթության ապահովմանը և գիտելիքների արդիականացմանը:
Մասնավորապես, 2025 թվականին ստորաբաժանման աշխատակիցներն իրենց մասնագիտական կարողություններն ամրապնդել են՝ ձեռք բերելով միջազգային որակավորումներ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ESG-ի և սանկցիոն ռիսկերի կառավարման ոլորտներում:

2025 թվականի ընթացքում Ներքին աուդիտի կողմից իրականացվել են բարձր և միջին ռիսկայնության գնահատում ստացած ոլորտների, գործառույթների, գործընթացների և տարածքային ստորաբաժանումների աուդիտներ:

Աուդիտների արդյունքներով ներկայացվել են մի շարք առաջարկություններ՝ ուղղված գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ներքին վերահսկողությունների ամրապնդմանը և գործող կարգավորող փաստաթղթերի կատարելագործմանը:

Ռիսկերի կառավարման համակարգը Յունիբանկի կայուն գործառնությունների հիմքերից է: 2025 թվականին բանկն ամրապնդել է ռիսկերի կառավարման ամբողջ ճարտարապետությունը՝ ապահովելով հավասարակշռությունը կապիտալի բավարարության, վարկային ռիսկի, իրացվելիության կառավարման և գործառնական ռիսկի կառավարման ոլորտներում:

Վարկային պորտֆելը 2025 թվականին արձանագրեց 28%-անոց աճ՝ պահպանելով բարձր որակական ցուցանիշներ: Ի տարբերություն բանկային համակարգի ընդհանուր միտման, Յունիբանկի ժամկետանց վարկերի մասնաբաժինը գրեթե չի փոխվել, ինչը վկայում է ռիսկի ախորժակի խիստ կառավարման և վարկային գնահատման մոդելների շարունակական կատարելագործման մասին:

Համապատասխանության ապահովման գործառույթ

2025 թվականի ընթացքում Բանկը շարունակել է զարգացնել կորպորատիվ կառավարման համակարգը՝ համապատասխանության ապահովման գործառույթը դիտարկելով որպես արդյունավետ և պատասխանատու կառավարման կարևոր բաղադրիչ:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակել է ամրապնդել համապատասխանության կառավարման շրջանակը՝ բարձրացնելով վերահսկողական գործընթացների արդյունավետությունը և ապահովելով համապատասխանության ռիսկերի ժամանակին բացահայտումն ու կառավարումը:

Բանկը շարունակել է կիրառել շահերի բախման կառավարման և հակակոռուպցիոն հսկողության մեխանիզմներ՝ առաջնորդվելով «զրոյական հանդուրժողականության» սկզբունքով:

Բանկը շարունակել է իրականացնել համապատասխանության ռիսկերի գնահատման և մշտադիտարկման գործընթացներ՝ ապահովելով օրենսդրական և կարգավորող փոփոխությունների ժամանակին ներդրումը ներքին ընթացակարգերում և գործառնական գործընթացներում:

Ֆինանսական մշտադիտարկման ոլորտում Բանկը շարունակել է կատարելագործել փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված հսկողական համակարգերը:

Միաժամանակ ապահովվել է FATCA/CRS պահանջների կատարումը՝ միջազգային հարկային հաշվետվողականության շրջանակում: Համապատասխանության մշակույթի շարունակական զարգացման նպատակով հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են աշխատակիցների պատրաստման և իրազեկման ծրագրեր, որոնք նպաստել են համապատասխանության պահանջների միասնական կիրառմանն ու կորպորատիվ պատասխանատվության բարձրացմանը Բանկի բոլոր մակարդակներում:

Համապատասխանության գործառույթը հաշվետու տարվա ընթացքում շարունակել է հաշվետվությունների և վերլուծական տեղեկատվության ներկայացումը Բանկի ղեկավարությանը և կառավարման մարմիններին՝ աջակցելով արդյունավետ կորպորատիվ կառավարման և կայուն զարգացման ապահովմանը:

15

Հավասարակշռություն

Ռիսկերի կառավարում

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բանկը կատարելագործել է ռիսկերի կառավարման համակարգը և նպաստել դրա ինտեգրմանը կառավարման բոլոր մակարդակներում: Այս գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունի Ռիսկ մշակույթի զարգացումը և տարածումը Բանկում, որի շրջանակում 2025թ.-ին Բանկի աշխատակիցների համար իրականացվել են մի շարք ուսուցողական թրեյնինգներ և հանդիպումներ:

Տարվա ընթացքում վերանայվել և թարմացվել է ռիսկերի ախորժակի շրջանակը՝ համապատասխանեցվելով 2025 թվականի ռազմավարական նպատակներին:

Արդիականացվել է ICAAP գործընթացը՝ ներառելով սցենարային վերլուծություններ և ներքին կապիտալի գնահատման նոր մոտեցումներ: Կատարվել են IFRS 9-ի շրջանակներում սպասվող վարկային վնասների հաշվարկման մեթոդաբանության բարելավման աշխատանքներ:

Վարկային ռիսկի կառավարման շրջանակում իրականացվել են ռիսկերի կոնցենտրացիայի վերլուծություններ ըստ ոլորտների, խոշոր վարկառուների և կապված անձանց, կատարելագործվել են ներքին գնահատման և վարկային վարկանիշավորման մոդելները, ինչպես նաև իրականացվել են ոլորտային սթրես-թեստավորումներ:

Գործառնական ռիսկի կառավարման ուղղությամբ քարտեզագրվել են բանկի հիմնական գործընթացները, սահմանվել են նոր KRI ցուցանիշներ, իրականացվել են սցենարային վերլուծություններ, մշակվել են զեղծարարությունների կանխարգելման և կառավարման մեխանիզմներ, ինչպես նաև կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ նոր աշխատակիցների համար:

Տարվա ընթացքում իրականացվել են ինչպես ընդհանուր, այնպես էլ նպատակային սթրես-թեստավորումներ՝ գնահատելով տարբեր մակրոտնտեսական և շուկայական ցնցումների ազդեցությունը բանկի ֆինանսական կայունության վրա: Կատարվել են նաև քանակական վերլուծություններ՝ կապված խոշոր վարկերի ազդեցության, կապիտալի բաշխման և ռիսկերի կառուցվածքի գնահատման հետ:

ESG ռիսկերի կառավարման ուղղությամբ մշակվել է ESG ռիսկերի կառավարման քաղաքականությունը, ներդրվել են ESG գնահատման տարրեր վարկային գործընթացներում, իրականացվել է ESG ռիսկային դասակարգման մեխանիզմների նախապատրաստում և մշակվել են ոլորտային ESG գնահատման գործիքներ:

Իրականացված միջոցառումների արդյունքում ամրապնդվել են բանկի ռիսկերի կառավարման կարողությունները, բարձրացվել է ռիսկերի վաղ հայտնաբերման և գնահատման արդյունավետությունը, ինչպես նաև ստեղծվել են հիմքեր հետագա զարգացման և միջազգային լավագույն փորձի ներդրման համար:

Վարկային պորտֆելի որակը, մլրդ ՀՀ դրամ

Վերջին տարիների ընթացքում դիտարկվում է վարկային պորտֆելի որակի էական բարելավում, ինչը արտահայտվում է խնդրահարույց վարկերի մասնաբաժնի կայուն նվազմամբ:Չաշխատող վարկերի ցուցանիշների բարելավումը վկայում է ինչպես վարկառուների ֆինանսական վիճակի ամրապնդման, այնպես էլ բանկերի ռիսկերի կառավարման մեխանիզմների արդյունավետության մասին:

Ոչ ժամկետն անց վարկեր Խումբ 3 - արժեզրկված վարկեր

16

Անվտանգություն

Հաճախորդների միջոցների պաշտպանություն

ԻՐԱՎԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԲԵՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բանկային ծառայությունների իրավական աջակցության գործառույթի արդյունավետ իրականացմանը, դատական և արտադատական գործընթացներում Բանկի շահերի պատշաճ պաշտպանությանն ու ժամանակին իրավական աջակցության ապահովմանը: Խնդրահարույց վարկերի վերադարձման և գրավադրված գույքի իրացման գործընթացների կազմակերպման և վերահսկման լայնածավալ միջոցառումների, Պահուստների կառավարման հանձնաժողովի հետևողական աշխատանքի արդյունքում արձանագրվել է շուրջ 12.3 մլրդ դրամի չափով փաստացի հետվերադարձ, այդ թվում՝ ընդհանուր 3.6 մլրդ դրամի չափով գույքի իրացում: Միաժամանակ իրականացվել են պայմանագրային փաստաթղթերի իրավական փորձաքննություն, իրավական ռիսկերի գնահատման և նվազեցմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև ապահովվել է Բանկի ստորաբաժանումների շարունակական իրավական խորհրդատվությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը՝ վերապատրաստումների և մասնագիտական դասընթացների ակտիվ մասնակցության միջոցով, ինչը նպաստել է իրականացվող աշխատանքների արդյունավետության և ծառայությունների որակի բարձրացմանը:

Բնապահպանական, սոցիալական եվ կառավարչական (esg) սկզբունքների ներդրում եվ ինստիտուցիոնալ շրջանակ

Հավատարիմ մնալով կայուն զարգացման իր որդեգրած քաղաքականությանը՝ Բանկը շարունակում է ռազմավարական համագործակցությունը «Agents For Impact» (AFI) կազմակերպության հետ: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը հաջողությամբ իրականացրել է AFI-ի կողմից կազմակերպված չորս վերապատրաստման դասընթաց՝ ուղղված տարբեր գործառնական ոլորտներին: Այս դասընթացների նպատակն էր համակարգված կերպով ներառել ESG (բնապահպանական, սոցիալական և կառավարչական) բաղադրիչները Բանկի հիմնական գործընթացներում և կորպորատիվ մշակույթում: Բացի այդ, հուլիսին Բանկը ձեռնամուխ է եղել պաշտոնական ESG վարկանիշի գնահատման գործընթացին: Այս անցումն առավել ամրապնդելու նպատակով՝ Բանկը ձեռնամուխ է եղել Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ESMS) քաղաքականության ներդրմանը: Քաղաքականության կիրարկումն արդեն իսկ ապահովում է առավել թիրախային մոտեցում և ստանդարտացում մեր պորտֆելում ESG-ի հետ կապված ռիսկերի և հնարավորությունների կառավարման հարցում:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

Բանկը շարունակում է հետևողական մնալ էթիկական վարքագծի և թափանցիկության ամենաբարձր չափանիշների պահպանմանը: 2025 թվականի հունիսին Բանկը պաշտոնական համաձայնագիր է ստորագրել միջազգային հավաստագրող հեղինակավոր «MFR» կազմակերպության հետ (Իտալիա, Միլան)՝ Հաճախորդների պաշտպանության հավաստագիր (Client Protection Certification) ստանալու նպատակով: Ներքին քաղաքականության և գործառնությունների մանրակրկիտ աուդիտի արդյունքում՝ 2026 թվականի մարտին Բանկին պաշտոնապես շնորհվել է հիշյալ հավաստագիրը: Այս ձեռքբերումը հանդիսանում է անկախ վկայություն այն մասին, որ Բանկի գործելաոճը լիովին համապատասխանում է հաճախորդների շահերի պաշտպանության միջազգային բոլոր ստանդարտներին և փաստում է մեր առաջընթացը լավագույն փորձի կիրառման ճանապարհին:

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԲԻԶՆԵՍ

Բրոքերային վարչությունը՝ 2025թ.-ին բրոքերային վարչությունը շարունակել է կայուն և դինամիկ աճը: Տարվա ավարտին բրոքերային հաճախորդների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ 72%-ով, իսկ հաճախորդների ակտիվների ծավալը՝ շուրջ 4.5 անգամ տարվա ընթացքում բրոքերային ծառայություններից ստացված եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են շուրջ 6.3 անգամ, իսկ իրականացված գործարքների ընդհանուր ծավալը՝ շուրջ 11.8 անգամ՝ վկայելով բրոքերային ուղղության ակտիվ զարգացման և հաճախորդների ներգրավվածության բարձրացման մասին: 2025թ.-ին ներդրվել է նոր՝ Prime Advisor ծառայությունը, որի շրջանակում հաճախորդների ներդրումային պորտֆելները գրանցել են 39.5% եկամտաբերություն: Միաժամանակ կազմակերպվել են հաճախորդների ներգրավմանը և ներդրումային գիտելիքների զարգացմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ Stock Master մրցույթը, որի հաղթողները մրցանակներ են ստացել բաժնետոմսերի տեսքով:

Հաճախորդների և աշխատակիցների ֆինանսական գրագիտության բարձրացման նպատակով բրոքերային վարչությունը կազմակերպել է մի շարք կրթական նախաձեռնություններ: Բանկի աշխատակիցների համար անցկացվել են սեմինարներ բրոքերային ծառայությունների և ներդրումային գործիքների վերաբերյալ, իսկ հաճախորդների համար կազմակերպվել է վեբինարների շարք՝ ուղղված ներդրումային գիտելիքների զարգացմանը: Բացի այդ, վարչությունը մասնակցել է մի շարք էքսպոների, որոնց շրջանակում ներկայացվել են բրոքերային ծառայությունների հնարավորությունները և Unibank Invest-ի առաջարկվող լուծումները: Բրոքերային ծառայությունների թվայնացման ուղղությամբ ստեղծվել է նոր և ավելի զարգացած հավելված, որը հաճախորդներին հնարավորություն է տալիս առավել հարմար և արդյունավետ կառավարել իրենց ֆինանսները: Ընդհանուր առմամբ, 2025թ.-ը բրոքերային վարչության համար եղել է աճի, նորարարությունների, թվայնացման և հաճախորդների վստահության ամրապնդման տարի:

UBPAY ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2025 թվականի սեպտեմբերին Հայաստանյան UBPay համակարգը համագործակցություն է սկսել կանադական Uremit ընկերության հետ, որը մասնագիտացած է միջազգային դրամական փոխանցումների ուղղությամբ: Համագործակցության շրջանակում հաճախորդները հնարավորություն են ստանում դրամական փոխանցումներ ուղարկել Հայաստանից ԱՄՆ, Կանադա, Վիետնամ, Ֆիլիպիններ, ԱՄԷ, Եգիպտոս, Թաիլանդ, Հնդկաստան, Չինաստան, Ինդոնեզիա, Շրի Լանկան, SEPA-ի կազմում ընդգրկված եվրոպական երկրներ, և հակառակ ուղղությամբ: Հոկտեմբերին UBPay հայաստանյան վճարահաշվարկային համակարգը համագործակցություն է սկսել միջազգային դրամական փոխանցումների ուղղությամբ մասնագիտացված iSend խոշորագույն ընկերության հետ: Նոր համագործակցությունն ընդլայնում է UBPay-ի հաճախորդների հնարավորությունները՝ դրամական փոխանցումները հասանելի դարձնելով դեպի ԱՄՆ, Կանադա, Հնդկաստան, Ավստրալիա, Սինգապուր և եվրոպական երկրներ:

17

Նոր Հորիզոններ

Նոր հեռանկարների բացահայտում, Նոր շուկաներ և հնարավորություններ

2026 ԹՎԱԿԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջնաժամկետ հեռանկարում իրականացման համար Բանկի հիմնական ռազմավարական նախաձեռնությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ ոլորտները և կարող է ընդլայնվել ու համալրվել փոփոխվող իրողություններով թելադրված նոր խնդիրներով:

- Մանրածախ և ՓՄՁ բիզնեսի զարգացում՝ որպես ռազմավարական առաջնահերթ ուղղություններ, ներառյալ սպառողական, հիփոթեքային և լիզինգային վարկավորման ծավալների աճ,

- Բանկի ներդրումային գրավչության բարձրացում՝ շահութաբերության աճի, ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման, ռեսուրսային բազայի օպտիմալացման և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման, թղթակցային բանկերի ցանցի ընդլայնման և միջազգային գործարար կապերի զարգացման, բրոքերային բիզնեսի և ներդրումային ծառայությունների հետագա զարգացման միջոցով,

- Բանկի տեխնոլոգիական հարթակի զարգացում՝ գործառնական գործընթացներում արհեստական բանականության գործիքների ակտիվ ինտեգրման, հաճախորդների բազայի խորքային վերլուծության համար ժամանակակից վերլուծական գործիքների ներդրման, ինչպես նաև թվային ծառայությունների և հաճախորդների հետ փոխգործակցության եղանակների ընդլայնման ու կատարելագործման միջոցով:

- Հաճախորդակենտրոն բիզնես մոդելի ամրապնդում՝ պոտենցիալ լսարանի և հաճախորդների հեռանկարային սեգմենտների բացահայտման, բանկային պրոդուկտներն ու լրացուցիչ ծառայությունները համատեղող համալիր փաթեթային առաջարկների մշակման միջոցով, որոնք կնպաստեն հաճախորդների ֆինանսական կարիքների առավել լայն շրջանակի ընդգրկմանը և Բանկի էկոհամակարգում նրանց ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

- Կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրում՝ ներքին քաղաքականությունների և ընթացակարգերի կատարելագործման, կառավարման և հսկողական մարմինների միջև լիազորությունների ու պատասխանատվության բաշխման արդիականացման, կառավարման մարմինների արդյունավետության

18

Ժառանգություն

Արժեքների շարունակականություն և երկարաժամկետ ազդեցություն

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավատարիմ մնալով իր կորպորատիվ արժեքներին և կարևորելով երկրի հասարակական, կրթական, սպորտային ու մշակութային կյանքի զարգացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացումը՝ Յունիբանկը 2025 թվականին շարունակել է իր սոցիալապես պատասխանատու գործունեությունը:
Պրոֆեսիոնալ սպորտի զարգացումն ու առողջ ապրելակերպի խթանումը շարունակում են մնալ Յունիբանկի սոցիալական պատասխանատվության առաջնահերթ ուղղություններից: Բանկը շարունակել է համագործակցությունը Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի հետ՝ հանդես գալով որպես գլխավոր հովանավոր:
Յունիբանկի աջակցությամբ Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոցում կազմակերպվել է ձյուդոյի մրցաշար՝ նվիրված Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակին:
Բանկի հովանավորությամբ Unisport ակումբը շարունակել է իր հաղթարշավը՝ դառնալով ֆուտզալի Հայաստանի չեմպիոն և գավաթակիր: 2025 թվականին Յունիբանկի հովանավորությամբ Երևանում անցկացվել է նաև «Unibank Cup» ֆուտզալի միջազգային մրցաշարը: Բանկը հանդիսանում է նաև «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբի ոսկե հովանավորը:
Յունիբանկը հանդես է եկել նաև որպես Հայաստանում անցկացված ժայռամագլցման բաց առաջնության և Velosolutions UCI Pump Track աշխարհի առաջնության հայկական որակավորման մրցաշարի գլխավոր հովանավոր:
Յունիբանկը շարունակել է համագործակցությունը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ՝ աջակցելով ժամանակակից կրթական միջավայրի զարգացմանը: Բանկը շարունակել է հովանավորել «Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ» ինտելեկտուալ հեռուստախաղը և աջակցել «Դիլիջանյան խաղեր» փառատոնի անցկացմանը:
Յունիբանկն աջակցել է մշակութային և հասարակական նշանակության ծրագրերին՝ համագործակցելով «Վանք» բարեգործական հիմնադրամի հետ: Հիմնադրամի միջոցով աջակցություն է ցուցաբերվել Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական միջազգային կրթահամալիրին, Հայաստանի ֆուտբոլի վետերանների միությանը, հեծանվասպորտի զարգացման ծրագրերին, Դիլիջանի զարգացման հիմնադրամի՝ նոր եկեղեցու կառուցման նախագծին, ինչպես նաև տաղանդավոր երիտասարդ երաժիշտների առաջխաղացմանը՝ «Երաժշտություն հանուն ապագայի» կրթական ծրագրի շրջանակներում:

ՅՈՒՆԻԲԱՆԿ

Բանկի հովանավորությամբ սահմանամերձ Կողբ գյուղում անցկացվել է Septemberfest փառատոնը՝ կենդանի երաժշտությամբ, մշակութային ծրագրերով և համայնքային ակտիվ միջոցառումներով:
2025 թվականին Յունիբանկը միացել է նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի դրամահավաքին՝ աջակցելով Սյունիքի մարզի Սպանդարյանի ջրանցքի վերակառուցման ծրագրին:

Հաշվետու տարում Յունիբանկի աջակցությամբ Երևանում անցկացվել է FINTECH360 միջազգային 10-րդ հոբելյանական համաժողովը, որը համախմբել էր բանկային, վճարային, SS և ֆինտեխ ոլորտների միջազգային առաջատար մասնագետներին՝ քննարկելու ոլորտի զարգացման արդիական միտումներն ու տեխնոլոգիական նորարարությունները:

Յունիբանկը հանդես է եկել նաև որպես «Երևանյան երկխոսություն» երկրորդ միջազգային ֆորումի հովանավոր, որը միավորել էր տարբեր երկրների պետական պաշտոնյաների, դիվանագետների, մասնավոր հատվածի ներկայացուցիչների և գիտնականների:

Յունիբանկը, որպես պատասխանատու բիզնես, կարևորում է նաև շրջակա միջավայրի պահպանությունը: Բանկը մասնակցում և ֆինանսական աջակցություն է տրամադրում Լեռնաջուր բնակավայրի տարածքում 100 հեկտար նոր անտառի հիմման ծրագրին: Մենք հավատում ենք, որ կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ոչ միայն ստեղծում է հանրային արժեք, այլև նպաստում է բիզնեսի կայուն զարգացմանը: Յունիբանկը շարունակելու է իր ներդրումը Հայաստանի զարգացմանն ուղղված ծրագրերում՝ հավատարիմ մնալով իր «Բանկ և ավելին» կարգախոսին:

19

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվություն հաճախորդների համար
+374 10 59 55 55
callcenter@unibank.am

Տեղեկատվություն բաժնետերերի համար
Ներդրողների և միջազգային կազմակերպությունների հետ
Հարաբերությունների զարգացման վարչություն
+374 10 59 22 59
ir@unibank.am
margarita.hambardzumyan@unibank.am

Տեղեկատվություն ԶԼՄ-ների համար
Հասարակայնության հետ կապերի ծառայություն
+374 10 55 56 86
lusine.khachatryan@unibank.am

Բանկի գլխամասային գրասենյակի հասցե՝ 0025, ՀՀ, Երևան, Չարենցի 12 N53, 1-5
+374 10 59 22 59, +374 10 59 55 55

ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

ՀՀ Կենտրոնական բանկ

BAFT BANKERS ASSOCIATION FOR FINANCE AND TRADE

ADB ASIAN DEVELOPMENT BANK

Black Sea Trade & Development Bank

IFC International Finance Corporation WORLD BANK GROUP

kfw ENTWICKLUNGSBANK

FMO Entrepreneurial Development Bank

IFAD INTERNATIONAL FUND FOR AGRICULTURAL DEVELOPMENT

MB

AMX Armenia Securities Exchange

KPMG

ROQ CAPITAL

ReGo INSURANCE

meta X investment company

MOODY'S

SIRIUS CAPITAL

SUSTAINALYTICS a Morningstar company

GX2 INVEST

Grant Thornton

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ UNION OF BANKS OF ARMENIA СОЮЗ БАНКОВ АРМЕНИИ

CCI FRANCE ARMÉNIE ՀԱՅ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ

GAF GERMAN ARMENIAN FUND

European Investment Bank The EU bank

BACEE BANKING ASSOCIATION FOR CENTRAL AND EASTERN EUROPE

mastercard

VISA

ubpay

ABPARTNERS FINANCIAL, COMPLIANCE AND LEGAL ADVISORY

FINARM FINANCIAL MARKET MEMBERS ASSOCIATION

FINTECH360